ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան. Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
Ֆաքս (3742) 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

18.04.13թ N 02/16.3/2215-13

Ձեր N ---------- առ ----------

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
իրավաբան պրն Գ.Հայրապետյանին

Ձեր 2013 թվականի ապրիլի 3-ի
թիվ 196-ի 8 գրություն

Հարգելի պարոն Հայրապետյան

Հաշվի առնելով **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի** 6-րդ հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկատվության ազատության սահմանափակումները հայտնում եմ, որ 2012 թվականի երկրորդ կիսամյակում նախարարության կարիքների համար մեկ անձից կատարված գնումների համար կնքվել են թվով 19 պայմանագիր՝ մոտ 8 մլն. դրամի շրջանակներում: Գնումներից յուրաքանչյուրի պայմանագրային գումարը չի գերազանցում մեկ միլիոն դրամը, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ենթակա չէ հրապարակման:

Ձեր իսկ մատնանշած **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի** 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն «Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք»:

Այս դեպքում պայմանագրերի պատճենների տրամադրումը տվյալ ընկերության համար համարվում է առևտրային գաղտնիք, որը կարող ենք տրամադրել միայն նրանց համաձայնության դեպքում: Այս սահմանափակման մասին ամրագրված է **ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներում:**

Հարգանքով՝ Մ.Բաղդասարյան

Վ.Մանուկյան
52 - 02 - 83